բազմաթիւ մահմետականներ կան, բայց ոչ-ոքի գլուխը չէր մտած այդ երկրների մէջ վերանորոգութիւններ իրագործելու ժամանակ, իշխանութիւնը յանձնել մի Թիւրք, մահմետական նահանգապետին։ Այդ կը նշանակէր քանդել նոյն իսկ այն վերանորոգութիւնները, որոնց իրագործման համար այդքան ջանք էր թափած, այդ կը նշանակէր ջուր մաղել, աւելի ոչինչ։

Մենք դարձեալ հրաժարվում ենք հաւատալ Դիւֆըրինի վերև յիշված պատասխանին։ կամ՝ դուցէ անգլիական դիւանագէտը դիտմամբ ցոյց է տալիս իր անկողմնապահութիւնը դէպի Թիւրքիան, որպէս զի ընդդիմադրութիւն գրգռելով հայերի և նրանց ներկայացուցչի, Ներսէս պատրիարքի կողմից, ցոյց տայ այդ ընդդիմադրութիւնը, որպէս արդարացի բողոք, որ անհնարին է անտես առնել։

Եթէ ոչ, ի՞նչ կը նշանակէ այդ տեսակ լօգիկա. մի փոքրիկ, տկարաթիւ ազգութիւն ճնշված է մի այլ, բազմաթիւ ցեղից, այդ փոքրամասնութեան համար հոգում է Եւրօպա, կամենում է բարենորոգումներ մտցնել նրա երկրում, բայց որովհետև ճնշողները մեծամասնութիւն են, ուրեմն նոյն ճնշողների ձեռքը պէտք է յանձնել ճնշված փոքրամասնութեան ներքին կառավարութիւնը։ Պարզ է որ այն ժամանակ ոչինչ բարենորոգութիւն չի լինի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՂԱՐՍԻՑ ստացանք մի հեռագիր որ այդտեղ ժողովված է 400 ռուբլ յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի և այդ գումարը ուղարկվեցաւ փօստով «Մշակի» խմբագրութեան անունով։ Առաջվայ փողերի հետ կանի 845 ռուբլ։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Կանօնագրութիւն հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում» Կանօնագրութիւնը տպված է հայերէն և ռուսերէն լեզուով։

—

«Մշակի» խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ պ. Գաբրիէլ Սունդուկեանցից նրա «Խաթաբալա» կօմեդիան, առանձին բրօշիւրայով տպված, Յ. Մարտիրոսեանցի տպարանում։ Տիպը շատ գեղեցիկ է և մաքուր։ Կօմեդիան նուիրված է Միհրդատ Ամիրխեանի յիշատակին, որ և ստեղծեց բեմի վրա Գարասիմ Նակուլիչի տիպը։ Մեր ստացած օրինակի վրա յայտնված չէ թէ ո՛րքանով է ծախվում գրքոյկը և որտեղ նրան կարելի է առնել։ Կօմէդիայի բովանդակութեան վրա մենք աւելորդ ենք համարում խօսել, քանի որ նա ծանօթ է ոչ թէ միայն Թիֆլիսեցիներին, բայց և Ռուսաստանի բոլոր հայերին։ Այդ պիէսան առաջին անգամ ներկայացրած է եղել 1866 թւին։

—

Այսօր, երեքշաբթի օր, սեպտեմբերի 8-ին, ինչպէս հաղորդում է «Кавказъ» լրագիրը, ժամը 1-ին կէսօրից յետոյ, պիտի բացվի հանդիսաւոր կերպով Թիֆլիսի հնագիտական ժողովը։ Նիստերը լինելու են փոխարքայի պալատի մէջ։

—

Լսում ենք որ երևելի գիտնական Վիրխօվին ընդունելու համար Թիֆլիսի բժիշկները պէտք է պատգամաւորութիւն ուղարկեն Մցխեթ, իսկ պրօֆէսօրի Թիֆլիս հասնելուց մի քանի օր յետոյ մեր բժիշկները դիտաւորութիւն ունեն տալ նրան մի ճաշկերոյթ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՎԱԳՐԹ" ԼՐԱԳԻՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ

—

Վագրըթ իւր այս աւուր թուով սա յայտարարութիւնը կընէ, որոյ արժէքին վրայ մեր կողմէ բան մը յաւելուլ չենք ուզեր։

„Զրոյց ելած էր թէ հրահանգներ եկած են Կ. Պօլսոյ դեսպանաց Անատօլուի (Հայաստանի) բարենորոգմանց նկատմամբ. բայց ստուգուած է որ այդ զրոյց անհիմն է։ Այսպիսի ընդհանուր հրահանգ մը գալու համար, պէտք է որ տէրութեանց միջև համաձայնութիւն կենայ այդ խնդրոյ վրայ։ Բայց Անատօլուի բարենորոգմանց մասին բնաւ համաձայնութիւն չը կայ։ կարելի է որ այս մասին խօսուած լինի այն հրահանգաց մէջ՝ որոց համար ըսինք թէ եկած են Լորտ Տըֆէրինի, բայց չեմք կարծեր որ Անգլիոյ դեսպանին հրահանգ տրուած լինի աւելի բան մ'ընելու քան թէ բարեկամական դիտողութիւններ ուղղել Բ. Դրան"։

Վագրըթ իւր այս աւուր թուով Մասիսէն կընդօրինակէ հայոց թւոյն վերաբերեալ հատուածը, զոր Փարիզի կրթական հանդէս մը հրատարակած էր, և զոր մեք բացատրած էինք, և յետոյ սա տարօրինակ խորհրդածութիւնը կընէ թէ. „Աշխարհի երեսը ցրուած այսչափ փոքրաթիւ ազգ մը (Հայք) թագաւորութիւն, իշխանութիւն, կամ մինչև իսկ ինքնօրինութիւն ստանալու անկարող լինելով, յայտնի է որ Էրմենիստան, Փիլան, խօսքերն երևակայութիւն են պարզապէս"։

Յայտնի է որ Վագրըթ իրաւունք չունի այսպէս խորհելու։ Եթէ հայկական թագաւորութիւն մը հաստատելու համար հայոց թւոյն և եթ նայիլ պէտք լինէր, տարակոյս չը կայ որ Հայք շատ աւելի բազմաթիւ են քան թէ թագաւորութիւն ունեցող կարգ մը ժողովուրդք, որպէս Հէլլենք, Փորթուկէզք, Հոլանտացիք, Տանիմարքացիք։ Դարձեալ, եթէ հայկական իշխանութիւն մը հաստատելու համար հայոց թւոյն ի հաշիւ առնուլ պէտք լինէր, տարակոյս չը կայ որ հայք շատ աւելի բազմաթիւ են քան թէ կարգ մ'իշխանութիւններ, որպիսի են Պուլկարիա, Սերպիա, Ղարատաղ, և այլն։ Եւ եթէ ինքնօրինութիւն տալու համար հայոց թիւ ի նկատ առնուլ պէտք լինէր, յայտնի որ հայք շատ աւելի բազմաթիւ են քան թէ ինքնօրինութիւն վայելող կարգ մը ժողովուրդներ, որպիսի են Արևելեան Րումելիի, Լիբանանի, և այլն բնակիչք։ Խնդիրն հոս է սակայն թէ այս երևակայական բաներէն ո՛չ մին թւով և եթ կը լինի, և եթէ հայք ո՛չ թագաւորութիւն, ո՛չ ինքնօրինութիւն, ո՛չ ալ իշխանութիւն ձեռք բերելու հետամուտ չեն, և միշտ կը փափաքին Օսմ. տէրութեան հովանաւորութեան ներքև մնալ, պատճառն այն չէ թէ իրենք երեք միլիոնէն աւելի չեն։ Վագրըթ իւր սովորական սրամտութեամբ պէտք էր քաջ ըմբռնէր այս կէտը։

(Մասիս)

ԻՏԱԼԻԱ

—

Վիկտոր Էմմանուէլ թագաւորի մահից յետոյ Հռօմի մէջ այնպիսի շքեղ և բազմամարդ թաղում չէ կատարվել, ինչպէս նորերումս կատարվեցաւ Թատրոնական գըր-

---

Թայքի դէմ, մէջ բերելով ի հարկէ «յանուն ազգասիրութեան» զանազան տեսակ կեղծ պատճառներ։ Բայց այդ փարիսեցիների հոգսը ի հարկէ ազգասիրութիւնը չէր, այլ իրանց սեփական գլուխը, որը պիտի ուտէր իրան արժանի հարուածը հերթը իրան հասած ժամանակ։

Դատաքննելով և մերկացնելով ռուսահայ հասարակութեան մէջ դարերով դիզված կեղտը, «Մշակը» չէր մոռանում և տաճկահայերին էլ, այլ կարողացածին չափ յիշում էր սոցա իրանց բռնած բոլոր անհաստատ, կեղծ, խաբուսիկ և ապիկար գործերի մասին էլ։ Բայց լինելով այսչափ հեռու սոցա իւրաքանչիւր գործից, հետևաբար և անկարող լինելով ի մօտոյ վերահասու ու տեղեակ գտնվիլ սոցա ամեն արարքներին, «Մշակը» ստիպված պիտի լինէր բաւականանալ լոկ ընդհանուր ցուցումներ անելով սոցա ունեցած թերութիւնների վերաբերմամբ։ Բայց երբ մի օր խորհուրդ յղացաւ ձեր մտերմական խմբի մէջ, որ ձեր աշխատակիցներից մէկը անպատճառ առիթ գտնէ գալ այս կողմերը, ձեզ աւելի ճիշդ տեղեկութիւններ և հաշիւ տալու համար, այդ մտքի իրագործմանից յետ, էլ սոքա դադարեցին զանց առնել «Մշակի» խորհուրդները և դիտողութիւնները, երբ առաջ գրեթէ միայն քէֆի համար էին կարդում նորա մշտապէս այնչափ լըջմտութեամբ արած առաջարկութիւնները։ Սորա պատճառը այն է, որ՝ գող սիրտը դող. մինչև ձեր աշխատակցի Կ. Պօլիս գալը, սոքա վստահ էին, որ մի որ և իցէ Կ. պօլսեցի ազնիւ երիտասարդ լաւ իմանալով սոցա դաւաճան և մատնիչ բնաւորութիւնը, սիրտ չէր անի սակայն շատ էլ պարզութեամբ բաց անել սոցա բոլոր օյինները, որովհետև այդպիսի դէպքում խեղճ ճշմարտասէր երիտասարդ թըղթակիցը բաւական կը պատժվէր, տեղացի լինելով։

Մինչդեռ ուրիշ բան է սոցա յարաբերութիւնը ինձ հետ, թէկուզ հազար տեսակ էլ հայհոյանք, լուտանք ու կեղտոտութիւններ էլ գըրեն իմ դէմ, թէկուզ հարիւր անգամ էլ դատ սկսեն ու մատնութիւններ անեն, դարձեալ գիտեն, որ մի օտարահպատակ անկախ մարդից մեծ բան չը պիտի կարողանան փաստակել, մանաւանդ որ իրանք էլ իմանալով իրանց ստրկական և թուլասիրտ յատկութիւնները, հաւանտի են, դուցէ որ անկարող լինել տանել իրանց իմ դէմ փորձած հարուածների contre-coup-ները։ Այսպիսով ուրիշ ելք չը մնաց սոցա համար, բացի միայն ուշի ուշով հետևել «Մշակին» իմ գրած թղթակցութիւններին և ուժերը մի արած ամեն կողմից գալ պաշտպանել իրանց գըլուխը բոլոր հրատարակութեանց և մերկացմանց դէմ։ Այս նպատակին աւելի յաջողութեամբ հասնելու համար, սոքա ընտրել են երկու կենտրօն՝ Թիֆլիսը, ուր նստած է սոցա մի խենթ մարգարէն և Կ. Պօլիսը, ուր ունեն սոքա կեղտերի ընդհանուր շահերով կապված մի քանի լրագիր, ընդ առաջնորդութեամբ ի հարկէ Թերջիմանի Էֆքեարի։

Այսպիսով «Մշակին» իմ գրած նամակներին ցնդաբանական բացատրութիւնները և հոսսական «հերքումները» կանոնաւոր կերպով երևում են «Մասիսի» և «Թերջիմանի» մէջ, իսկ այստեղ գրածներիս պօլսական թարգմանութիւնը երևում է անդադար այդ տեղի մի «յառաջադէմ» լրագրի էջերում։ Куликъ кулика видитъ изъ далека. լաւ են գտել միմեանց....

Կ. Պօլսի մէջ կայ մի խումբ մարդիկ, որոնք կաթօլիկութիւնից հազար ու մէկ դէմօնստրացիաներով լուսաւորչականութեան դիմելով, յոյս ունէին ազգի գլխին մի տեսակ խալիֆութիւն անել՝ կրօնաւորը պատրիարք կամ կաթողիկոս լինել, գրասէրը հարստութեան և արձաններին արժանանալ, արհեստաւորը համայն ազգի ուշադրութեան և խրախուսանքին և այլն. այս ամենը ի հարկէ իբր «արժանի» վարձատրութիւն իրանց ցոյց տուած «մեծ հայրենասիրութեան» և «զոհաբերութեանց»։

Առաջի անգամ ի հարկէ ամեն կողմից իւրաքանչիւր հայ, ինչով միայն կարող էր, սկսեց իր մեծարանքն ու համակրութիւնը յայտնել նրանց։ Բայց երբ ամեն կողմից տեսան, որ սոքա շատ մոռանում են իրանց չափը և «ազգասիրութիւնը» շատ են չափազանց կերպով գործ ածում ի նպաստ իրանց գրպանին և ի վնաս ազգի որբերին, այդ ժամանակ ի հարկէ ամեն տեղից սկսեցին վզին խփել ու դուրս վռնդել։

Հիմայ գանք միւս տեսակ փորացաւ ունեցողներին՝ մամուլին և ինտելլիգենցիային։ Սորանք էլ տեսնելով, որ իրանց բոլոր կեղտոտ արարքները հետզհետէ պիտի հրապարակ հանվեն, էլ բաները գործերը մի կողմը դրած սկսեցին այժմ իրանց գլխաւոր զբաղմունքը շինել «Մշակը» և նորա աշխատակիցը։ Օր չի անցնի, որ այստեղի լրագիրներից գոնէ երեքը չունենայ յօդուած, մի անզօր զայրոյթով իր մասին արած այս ինչ, այն ինչ մերկացման դէմ։ Իսկ թէ որչափ զեղծ է Կ. Պօլսի մամուլը և ինտելլիգենցիան գօշաքաղութիւնից, կեղծ ազգասիրութիւնից, դատարկախօսութիւնից և ամեն տեսակ ստոր խարդախութիւններից, ահա ապացոյցներից մի քանիսը։

Սիսի կաթողիկոսը ինը ամիս Կ. Պօլիս սպասելով ազգային ժողովի որոշման և ունենալով աշկարայ դիտաւորութիւն անաջողութեան դէպքում բաժանվել Կ. Պօլսի պատրիարքի իրաւասութիւնից, գրեթէ ոչ մի հայ լրագիր, բացի Մանզումէի Էֆքեար, ոչ մի անգամ չը յիշեցրեց ազգային ժողովին նորա պարտաւորութիւնները և նորա զանցառութիւններից յառաջ գալի վըտանգները, որովհետև հարիւր ու մէկ տեսակ շահեր և գօշաքաղութիւններ ունենալով ազգային ժողովի մէջ պոռոտախօսող էֆենդիներից, հայ լրագրութիւնը չը համարձակվեց մատնացոյց լինել նոցա իրանց պարտաւորութեանց վրա։ Իսկ եթէ հիմայ, ընդհակառակը, ամեն կողմից սկսել են միանգամից, օր և գիշեր, յարձակվել Սիսի կաթողիկոսի վրա, չը կարծէք, որ այդ նորանից է, որ այս կեղծաւոր և շահամոլ լրագիրների սիրտը այրվում է. ամենևին ո՛չ, այլ նորա համար է միայն, որ էֆենդիների հրամանը այդպէս է պահանջում։ Միթէ իրաւացի չէ այժմ «Մանզումէն» երբ հրատարակել է իր ընթերցողաց՝ թէ տեսնելով վեց հայ թերթերի այս տեսակ անպիտանութիւնները, նա ամենայն սիրով տեղի կը տայ իր լրագրի մէջ ոչ միայն այն յօդուածներին, որոնք ընդդէմ Սիսի կաթողիկոսին են, այլ եւ ի նպաստ։ Մինչդեռ այսպիսի անաչառ և ազատ վարմունքի համար այդ խեղճ լրագիրը ուրիշ օր չէ տեսնում փարիսեցիների ձեռքից բացի զայրոյթ և դաւ...

Պատրիարքարանի բոլոր պաշտօնեաները չը ստանալով ռոճիկ, սնդուկի դատարկութեան պատճառով, բոլոր ընթացիկ գործերը թողել են առ կախ, ինչու. որովհետև տասնեակ հազարներով ճառեր տրաքացնող փարիսեցիները միայն խօսքով են հայրենասէր, այլ ո՛չ մի կոպէկ անգամ տալու իրանց պատրիարքարանը և պատրիարքին պահելու համար։

Ազգային հիւանդանոցի հոգաբարձութիւնը երէկ խմբովին հրաժարական տուաւ, թողնելով հիւանդանոցի մէջ վեց հարիւրից աւելի որբ ու անկարներին անտէր անտերունչ. ինչու. որովհետև որքան հազարներով այդ հիւանդանոցի պարտէզում կեցցէներով տարեդարձներ կատարող խաբեբայ չարլատանները, որոնք ամեն տեսակ ապականութեանց համար այնչափ առատ են, ոչինչով չեն ուզում օգնել հիւանդանոցին։

Ո՞րը ասեմ, որո՞վ վերջացնեմ ցոյց տալու համար ձեզ թէ՝ որչափ սուտ է, կեղծ ու խաբեբայ այստեղի ինտելլիգենցիան. որչափ անօգուտ և ապարդիւն է նա նոյն իսկ Կ. Պօլսի հայերի կարեաց անշահախնդիր ու օրինաւոր կերպով ծառայելու համար, էլ ո՞ւր մնաց Հայաստանը «լուսով» փրկելու։ Սուտ են, հարիւր անգամ սուտ են սոցա բոլոր ճառերը, բոլոր խօսքերը, շարժուածքը, գործունէութիւնը, վասնորոյ մի օր առաջ պիտի բարութիւն անենք Հայաստանի ժողովրդին, յայտարարելով, հրատարակելով, արծարծելով համայն հայ աշխարհի մէջ, թէ՝ Հայաստանի հայ ազգաբնակութեան համար մայրաքաղաքների ինտելլիգենցիայի կողմից չը կայ մի մանանեխի, մի կորեկի չափ օգուտ. վասն որոյ թողնելով հայկական հարցի հոգացողութիւնը Ներսէս պատրիարքի կամ վերջապէս մի խումբ անհատների վրա, ընդհանուր հայ երիտասարդութիւնը, որի մէջ դեռ կայ մի ազնիւ սիրտ, պիտի սկսէ մտածել վերջապէս թէ՝ որը պիտի լինի իր անելիքը և կատարելիքը Հայաստանի ժողովրդի բարձի թող արած վիճակին, նորա անչափ կարեաց և պէտքերին դարման տանելու համար թէ ռեֆորմները կատարվելուց առաջ, թէ նորանից վերջը. ահա սա է հերթական հարցը Հայաստանի ժողովրդին սրտացաւ իւրաքանչիւր ազնիւ հայի համար. հնարք գտնենք հայրենիքին անմիջապէս ձեռք մեկնելու մասնագէտ մարդիկ թէ դրամ ուղարկելով այն տեղ։

Գրիգոր Նիկողոսեան